

**ИЗУЧЕНИЕ ОБРАЗА ПОКР МГЕРА
ПО ТИПОЛОГИЧЕСКИМ ГРУППАМ МОКСА И МУША**

**А. А. Гаривян
А. В. Асоян**

В данной работе рассматривается эволюция образа Покр Мгера, начиная с его рождения до его заточения в камень по типологическим группам Мокса и Муша. Выделяются основные дифференцированные мотивации, присутствующие в указанных типологических группах.

**STUDY OF THE CHARACTER OF MHER THE JUNIOR
BY THE TWO TYPOLOGICAL GROUPS OF MUSH AND MOKS**

**A. A. Gharibyan
A. V. Asoyan**

The article studies the development of the character of Mher the Junior from his birth up to his isolation in the rock by the two typological groups of Mush and Moks. It mentions the main distinguished motivation existing in those typological groups.

**ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ - ՆԱՑԻՉՍ ՀԱԿԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
(Հ. ՀԵՍՍԵՆԻ «ՃԱՆԱԿԱՐԻՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐԵՎԵԼԸ»
ՊԱՏՄՎԱԾՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)**

Տ. Ս. ՍԻՄՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հոդվածի նպատակն է համառոտ նկարագրել Հեսսեի՝ «Ճանապարհորդություն դեպի Արևելք» (1932) պատմվածքում նկարագրված Եղբայրությունը, այնուհետև տիպաբանորեն ներկայացնել Եղբայրության (իբրև մշակութային մոդել) և մացիզմի արժեքաճանաչական համակարգերի տարբերությունը: Ինչու՞ մացիզմի: Բանն այն է, որ պատմվածքը գրվել է մացիստների՝ Երրորդ Ռայխի ստեղծումից մեկ տարի առաջ: Եղբայրությունը մենք դիտարկելու ենք իբրև մի հակա-տեքստ՝ ուղղված մացիստական արժեքաճանաչական համակարգին:

Գերմանացի մեծանուն գրող, Նոբելյան մրցանակակիր (1946 թ.) Հ.Հեսսեն իր «Ճանապարհորդություն դեպի Արևելք» (1932) պատմվածքում նկարագրում է մի սիմվոլիկ ճանապարհորդություն-ուխտագնացություն, որի մասնակիցները բնագրում անվանվում են «եղբայրներ» (“Bruder”, “Kamerad(schaft)”), իսկ ամբողջ խումբը՝ Եղբայրություն¹: Եղբայրության մեջ տեղ են գտել և՛ *իրական* (Լոնգուս (Լանգ), Ալբերտ Մեծը, Տիկ, Բրենտանո, Հոֆման, Արիոստո, Լաուշեր (Հ. Հ.) և այլն), և՛ *գրական կերպարներ* (Ռյուդիգեր, Իրիս, Սիդիարթիա, Քլինգգոր, Պարլո, Անսելմ, Դոն Կիխոտ, Պարցիֆալ, Գոլդմունդ, Լինդհորստ և այլն): Ինչպես նկատում ենք, Եղբայրության տոնին մասնակցում են տարբեր մշակույթների

ներկայացուցիչներ և գրական հերոսներ: Սա մեզ հիմք է տալիս պնդելու, որ գործ ունենք *բազմամշակութային* (Multikultur), *ազգային սահմաններ չունեցող* մի երևույթի հետ, երբ տարբեր մշակույթների դաշտում ստեղծված գրական երկերը, տարբեր հեղինակների կերտած կերպարները ներառված են մեկ ամբողջության մեջ:

Երաժիշտ Յ.Յ.-ն, որի անունից էլ հիմնականում պատմվում է այս տեքստը, նշում է՝ քանի որ «մեր միության ջանքը և գործունեությունն այսօր մոռացվել կամ աշխարհի ծաղրանքի առարկա է դարձել, եկել է օրը վերաբացահայտման, և իմ գրառումները պետք է որոշ չափով նպաստեն դրան»²: Մեջբերվածից եզրակացնում ենք, որ հետսեական այս տեքստը կոչված է հիշեցնելու մշակութային եղբայրության, այսինքն՝ հոգևոր արժեքների, մշակույթի կարևորության մասին, քանի որ մարդիկ, փոխանակ «նոր վերապրած ահավոր, տևական, սարսափելի պատերազմը (խոսքը Առաջին աշխարհամարտի մասին է. – Տ. Ս.) մոռանա, պատերազմական հետաքրքրաշարժ վեպերի միջոցով նորից փորձում են վերհիշել, թե հենց իրենք ինչ դժբախտություններ են պատճառել ուրիշներին և վերապրել» (Die Morgenlandfahrt, S. 12): Պատումը վարողը, պատերազմական վեպեր («Kriegsromane») ասելով, նկատի ունի մացիստական պատերազմական վեպերը:

Իսկ թե աշխարհում մշակութային արժեքներն ինչու են դարձել ծաղրանքի առարկա («Gelächter der Welt»), ապա այն պայմանավորված էր մացիստների կողմից քարոզվող հակահամամարդկային, հակամշակութային արժեքանական համակարգով: Նացիզմի քննադատությունը բացահայտ է դառնում հետևյալ հատվածում. «...մենք պատերազմից հետո մեր երկիրը լի էր տարբեր փրկիչներով («Heilanden»), մարգարեներով («Propheten»), մարգարեին հետևող երիտասարդ հետևորդներով («Jüngerschaft»), ովքեր կանխագգում էին աշխարհի վախճանը կամ Երրորդ Ռայխի հիմնավորման հույսը» (Die Morgenlandfahrt, S. 13): Ինչպես նկատելի է, խոսքը ազգայնականների ծառերի մասն է: Պատումը վարողն ակնարկում է նաև մացիզմի կրոնական դրսևորման մասին³: «Մարգարեներ», «փրկիչներ» նշանակիչները մատնանշում են մացիստական քաղաքականության և գաղափարախոսության կենտրոնական դեմքերին: Ինչ վերաբերում է Երրորդ Ռայխին, ապա հայտնի է՝ այն զոյատուում է ընդամենը տասներկու տարի:

Նացիզմի դրսևորման կրոնական տարրերի մասին Յեսսեի պատմվածքում Յ. Յ.-ն շեշտում է նաև, որ ժողովրդի մեջ կան մարդիկ, ովքեր «անիրականաճալի, մտացածին մտքերին են հավատում, անգամ ոմանց հոգիները գրավում», խոսում են այստեղի և այնտեղի, հրաշքի առկայության մասին, առկա են նաև «բա-

¹ Նկատենք, որ Յեսսեի նկարագրած մոդելը բնագրում մատնանշված են «միություն» («Bund») և «եղբայրություն» («Kameradschaft») բառերով: Մեզ համար երկու տարբերակն էլ ընդունելի են:

² **Hesse Hermann**, Gesammelte Schriften (Die Morgenlandfahrt, Das Glasperlenspiel), Sechster Band, Suhrkamp Verlag, Fr. Am Main 1987, S. 12. Յետայսու բոլոր մեջբերումները կատարելու ենք այս գրքից և փակագծում նշելու ենք խորագիրն ու էջը:

³ Այս մասին տես **Տիգրան Սիմյան**, «Նացիստական քաղաքականությունը իբրև կրոն և նրա քարոզչության «ալիքները» // Պատմության հարցեր: Տարեգիրք/ Խմբ. Ա. Ա. Ստեփանյան, Երևան, «Զանգակ-97», 2011 (հանձնված է տպագրության):

քոսյան պարային համայնքներ» (“bacchantische Tanzgemeinden”) և «անաբատիստների ռազմական խմբեր» (“wiedertäuferisch? Kampfgruppen”):

ա/ «Բաքոսյան պարային համայնքներ» (“bacchantische Tanzgemeinden”) բառակապակցությունն իմաստաբանորեն ծանրաբեռնված է. այն ենթադրում է հաղորդակցական կապ դիոնիսյան (բաքոսյան) պարային համայնքների հետ: Հայտնի է, որ Դիոնիսիոսը Հին Հունաստանում խաղողի, գինու, արբեցումի, ուրախության և ընդհանրապես բուսական աշխարհի աստվածներից էր⁴: Հեսսեական տեքստի համապատկերում առավել «ակտիվ» է արբեցումը: Դիոնիսիոս (Հիտլեր)// բաքոսյան պարային համայնքներ հաղորդակցության համատեքստում Դիոնիսիոսը աստվածացվում է, ով իր հերթին *արբեցում* է ժողովրդին իր մարգարեություններով, այն է՝ քաղաքական միջերով: «Բաքոսյան պարային համայնքները»՝ քաղաքական ծեսը սպասարկողները, տոնականություն են հաղորդում Դիոնիսիոս-Հիտլերի պաշտամունքին: Դիոնիսիոս-Հիտլեր աղերսն ավելի հիմնավոր է դառնում նաև նրանով, որ վրիժառու Ջևսի կինը՝ Հերա աստվածուհին, սպանում է Սեմելային՝ Դիոնիսիոսի մորը, իսկ Դիոնիսիոսին՝ խելագարեցնում⁵: Միջակայքն այս միջադեպը հիմք է տալիս պնդելու, որ հեսսեական տեքստում «ակտիվ» է նաև Հիտլեր-Դիոնիսիոսի խելագարության իմաստը: Կարծում ենք՝ պատահական չէ ընտրված “bacchantisch” բառը, որը նշանակում է՝ 1. բաքոսյան, այսինքն՝ աղմկոտ⁶, 2. հարբած, 3. անզուսպ, կատաղի, մոլեգին: Հեսսեական համատեքստում բոլոր երեք իմաստներն էլ ակտիվ են այն իմաստով, որ մարգարեի խոսքերը գիտակից մարդու համար աղմուկ են, անիմաստ մի բարբաջանք, բայց կատաղի, մոլեգին ամբոխի համար Հիտլեր-Բաքոսի խոսքը՝ արբեցում, որի ազդեցության տակ զանգվածները պատրաստ են դիմել ցանկացած քայլի: Իսկ ինչ վերաբերում է «Tanzgemeinde» բառին, ապա այն կամազուրկ արբեցած հիմնականում նացիստական գաղափարաբանությամբ զինվորական տղամարդկային զանգվածի ցուցիչ է:

Հայտնի է, որ Դիոնիսիոսին նվիրված ներբողյանները հիմնականում կատարում էին տղամարդիկ կամ տղա-երեխաներից բաղկացած երգչախմբերը⁷: Տղա-երեխաները ևս նացիստական համակարգում ակտիվ դեր էին կատարում (Hitlerjugend, «հիտլերյան երիտասարդություն»)⁸: Աջ կողմի պաստառը հստակ կերպով արտահայտում է պաշտոնական նացիստական քարոզչամեթոդային հիմ-

⁴ **Радциг С. И.** История древнегреческой литературы, Изд. 4, испр. М., “Высшая школа”, 1977, с. 182.


⁵ Ըստ ավանդության՝ Դիոնիսիոսը բուժվում է իր աստվածուհի տատիկի՝ Կիբելա-Ռեայի մոտ, որից հետո նա հաղորդակից է դառնում օրգիաստիկ միստերիաների (Популярный словарь русского языка. Толково-энциклопедический (сост. Гуськова А. П., Сотин Б. В.), «Русский язык-Медиа», 2003 // ABBYY Lingvo x3:

⁶ Նույն տեղում:

⁷ **Радциг, С. И.**, История древнегреческой литературы, Изд. 4, испр. М., “Высшая школа”, 1977, с. 150.

⁸ Նացիստական քարոզչամեթոդան մեծանուն ցուցապաստառների միջոցով ընդլայնում էր «պարային համայնքների շարքերը», քանի որ ցուցապաստառը թաքնված հրամայական եղանակով (որովհետև բայը բաց է թողնված) պահանջում է՝ «բոլոր տասը տարեկանները Հիտլերյուգենդ» (Alle zehnjährigen in die HJ):

նական դրույթները, այն է՝ եկող սերունդը պիտի հայացքն ուղղի ֆյուրերի՝ դիտանկյան, տեսադաշտի կողմը: Նույն երևույթը տեսնում ենք նաև ծախ կողմի պաստառի վրա: Նկատելի է, որ այս երկու պաստառներն էլ ունեն մեկ ընդհանրություն՝ ներքև/վերև հակադրությամբ կառուցված պաստառներ են: Այս երևույթի առկայությունն է ստիպել Յեսսենին՝ կարծելու, որ կամազուրկները պիտի «պարեն», կատարեն ֆյուրերի ծրագրերը, ինչը համապատասխանում է պաստառի վրա գրվածին՝ «Երիտասարդությունը ծառայում է ֆյուրերին» (Jugend dient dem Führer): Բայց այս ծառայության տեսակը կամազուրկ է: Ամբողջը ստորադասվում է անհատին՝ ֆյուրերին:



թ/ «Ամաբատիստների ռազմական խմբեր» (“wiedertäuferische Kampfgruppen”) բառակապակցության մեջ «ռազմական խմբերը» (“Kampfgruppen”) բացահայտ են մատնանշում նացիստական զորամիավորումներն ու ռազմական տրամադրվածությունը: Ինչ վերաբերում է “wiedertäuferische” հարաբերական ածականին, ապա այն մատնանշում է Ռեֆորմացիայի տարիներին սկիզբ առած մի ծայրահեղական աղանդ, որի դավանանքում առկա էին հետևյալ՝ մեր համատեքստին համահունչ դոգմաները.

1. Նրանք մերժում էին ոչ հասուն տարիքում մկտվելը և պահանջում վերստին մկրտվել⁹ արդեն *հասուն տարիքում*: Այստեղից էլ գալիս է վերստին մկրտվածներ աղանդի անվանումը (հուն. Anabaptizo – նորից ընկղմում են, այսինքն՝ երկրորդ անգամ մկրտում)¹⁰: Յեսսեն նացիստներին, հավանաբար, անաբատիստներ էր անվանում այն իմաստով, որ նրանք պարտադիր պետք է երդվում տային (= մկրտություն), որ ծառայելու են ֆյուրերին: Երկրորդ «մկրտությունը» քաղաքական էր:

2. Նրանք հավատում էին, որ երկրագնդի վրա հաստատվելու է Քրիստոսի հազարամյա թագավորությունը (խիլիազմ հուն. chilies – հազար բառից): Նացիստներն իրենց հերթին հավատում էին Երրորդ Ռայխի հավերժությանը: Բ. Բրեխտն իր «Երրորդ Ռայխը» սատիրական բանաստեղծության մեջ ծաղրում է նացիստների թագավորության տևողությունը. «Ֆյուրերը հավաստիացնում է, որ Երրորդ Ռայխը // պետք է երեսուն հազար տարի տևի // Թող դրա վրա բարձր վայրերում չկասկածեն: // Բարձր վայրերում կասկածում են // կարո՞ղ է արդյոք Երրորդ Ռայխը մինչև հաջորդ ձմեռ դիմանալ¹¹: Ֆյուրերը հավաստիացնում է, որ

⁹ Նույն ձևով է կառուցված բնագրային բառը՝ wieder (նորից) –täuf (< taufen - մկրտել)-erische):

¹⁰ **Чистозвонов А. Н.** Анабаптисты // Большая Советская Энциклопедия (БСЭ), 3-е издание. 1970-1977 / ABBYY Lingvo x3.

գալիք պատերազմը հաղթելու ենք..., Հաջորդ աշխարհամարտը հաղթելու ենք // եթե մենք բավարար աղբ հավաքենք...»¹²:

3. Մյունստերյան անաբապտիստական ծայրահեղականները՝ Յան Մատիսի և Յոհան Լայդենցու գլխավորությամբ, որդեգրել էին մի ծրագիր, ըստ որի՝ զենքով պիտի փոխեին տիրող իրավիճակը¹³ ու երկրագնդի վրա հաստատեին «Քրիստոսի թագավորությունը»: Ինչպես նկատում ենք, Հեսսեի՝ մացիստների տրված գնահատականները իմաստաբանական ու մշակութաբանական բոլոր մակարդակներում դիպուկ են բնութագրում մացիստական վարչակարգը, նրա մարտավարությունը:

Իսկ ի՞նչ դեր է կատարում հոգևոր միությունը «պատերազմով խաբիսված աշխարհում» (Die Morgenlandfahrt, S. 24): Միությունը փորձում է «հաղթել հավատքով, որ ստեղծի դրախտ, ինչի համար մենք ներկա վարկյանում ներդնում ենք անցյալը, ապագան, ստեղծագործաբար հնարվածը» (Die Morgenlandfahrt, S. 24): Մեջբերվածում նկատելի է «պատերազմով խաբիսված աշխարհ» («vom Kriege erschütterte Welt»)/դրախտ հակադրությունը: Ըստ Հեսսեի՝ «պատերազմով խաբիսված աշխարհից» դրախտի անցումը հնարավոր է դառնում միության հավատքի, անցյալի, ապագայի ու հորինվածքի շնորհիվ: Այլ կերպ ասած՝ պատերազմը հնարավորություն չի տալիս, որ եվրոպական հասարակություններում ստեղծվի արժեքաբանական «դրախտը»:

Նացիզմը քննադատվում է պատմվածքի մաս այն հատվածում, որտեղ նկարագրվում է միության տեղաշարժումը տոնակատարության ժամանակ: Միության հազարավոր անդամներ չէին շարժվում կանոնակարգված շարքերով («in einer festen Ordnung») և միևնույն ուղղությամբ («alle in gleicher Richtung») (Die Morgenlandfahrt, S. 20-21): Խոսքն այստեղ մացիստական զինվորականների ծիսականացված, անհատականը համընդհանուրին զոհաբերված, շարժումներում ազատության բացակայության մասին է, քանի որ նրանք շարժվում են միայն մեկ ուղղությամբ¹⁴: Հեսսեի նկարագրածը հակադրվում է մաս մացիստների արժեքաբանությունը սնող 1909-ին գրված Մարիներտտի առաջին մանիֆեստում հնչեցված երրորդ կետին. «...իսկ մենք գովերգում ենք լկտի ճնշումը, տենդային գառանցանքը, **շարքային քայլը** (ընդգծումը մերն է.- Տ. Ս.), վտանգավոր թռիչքը,

¹¹ Բրեխտի բանաստեղծության մեջ տեղ գտած այս միտքն իր ժամանակի արձագանքներից է, ըստ որի՝ Հիտլերը և նրա երրորդ Ռայխը երկար չի կարող գոյատևել:

¹² Brecht, Bertolt, Gesammelte Werke, Band 2, Suhrkamp Verlag, Frankfurt am Main, 1990, S. 715-716.

¹³ Նրանք ուզում էին ներմուծել ունեցվածքի և իրավունքների համընդհանուր հավասարություն, ընտանեկան ու բարոյահոգեբանական մոր հարաբերություններ, որոնք համահունչ պետք է լինեին Աստվածաշնչի անաբապտիստական մեկնաբանությանը (**Чистозвонов А. Н.** Анабаптисты // Большая Советская Энциклопедия (БСЭ), 3-е издание, 1970-1977 / АBBYY Lingvo x3):

¹⁴ Հեսսեի նկարագրածը տարիներ անց լավագույնս իր գեղարվեստական ձևավորումն է ստանում Լենի Ռի-Ֆեշթալի «Կամքի հաղթանակը» (Triumph des Willens, 1935) գեղարվեստական ֆիլմում:

ապտակը և քիթ ու մռուք ջարդոցին»¹⁵: Ինչպես նկատում ենք, մեջբերվածը կարծես քսանչորս տարի անց նացիզմի գործունեության նկարագրությունը լինի:

Այլ է Հեսսեի նկարագրած՝ միության անդամների շարժման մոդելը. «Միաժամանակ շարժման մեջ գտնվող բազմաթիվ խմբեր, որոնց անդամները հետևում են իրենց առաջնորդներին ու աստղերին. յուրաքանչյուրը պատրաստ է ավելի մեծ միասնություններին ձուլվել և որոշ ժամանակ նրանց պատկանել, բայց կարող է նաև բաժանվել՝ իր ճանապարհը շարունակելու համար: Անդամներից մեկը գնում էր մենակ իր ճամփով, նաև ես ժամանակ առ ժամանակ մենակ էի քայլում, երբեմն էլ, երբ ինչ-որ նշան կամ նշանակ կարող էր տանել ինձ ուրույն ճանապարհով» (Die Morgenlandfahrt, S. 21): Փաստորեն, միության անդամներն իրենց շարժումներում, մղումներում ազատ էին. ցանկացած անդամ կարող էր առաջնորդվել իր երազանքների, ճակատագրի (= «աստղ, Stern») ուղղությամբ, ինչը նացիստական համակարգում բացակայում էր, անհատի կամքը ստորադասված էր առաջնորդի (= «Führer») կամքին:

Այսպիսով, երկու բառակապակցությունների իմաստաբանական քննության հիման վրա, տեսանք՝ ինչքան տարբեր ու իրարամերժ էին Եղբայրության և նացիստների արժեքաբանական համակարգերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՆ ՑԱՆԿ

1. *Hesse Hermann*, Gesammelte Schriften (Die Morgenlandfahrt, Das Glasperlenspiel), Sechster Band, Suhrkamp Verlag, Fr. Am Main 1987.
2. *Brecht Bertolt*, Gesammelte Werke, Band 2, Suhrkamp Verlag, Frankfurt am Main, 1990.
3. *Маринетти Ф. Т.* Первый манифест футуризма // Называть вещи своими именами: Прогр. выступления мастеров запад.- европ. лит. XX века (Сост., предисл., общ. ред Л.Г Андреева), М., изд. “Прогресс”, 1986.
4. Популярный словарь русского языка. Толково-энциклопедический (сост. *Гуськова А. П., Сотин Б. В.*), «Русский язык-Медиа», 2003 // ABBYY Lingvo x3:
5. *Радциг, С. И.* История древнегреческой литературы, Изд. 4, испр. М., “Высшая школа”, 1977, с. 182.
6. *Чистозвонов А. Н.* Анабаптисты // Большая Советская Энциклопедия (БСЭ), 3-е издание. 1970-1977 / ABBYY Lingvo x3.
7. *Տիգրան Սիմյան*, Նացիստական քաղաքականությունը իբրև կրոն և նրա քարոզչության «ալիքները» // Պատմության հարցեր: Տարեգիրք (Խմբ. Ա. Ա. Ստեփանյան), Երևան, «Զանգակ-97», 2011:

ОППОЗИЦИЯ БРАТСТВО / НАЦИЗМ (НА ПРИМЕРЕ ПОВЕСТИ Г. ГЕССЕ “ПАЛОМНИЧЕСТВО В СТРАНУ ВОСТОКА”)

Т. С. Сияян

В статье делается попытка проанализировать модель Братства, ее структуру, как аксиологическую антимodelь нацистской идеологии, которая описывается в повести Г.Гессе “Паломничество в

¹⁵ *Маринетти Ф. Т.*, Первый манифест футуризма, с. 160 // Называть вещи своими именами: Прогр. выступления мастеров запад.- европ. лит. XX века (Сост., предисл., общ. ред. Л. Г. Андреева), М., изд. “Прогресс”, 1986.

Страну Востока” (1932). Повесть рассматривается в контексте 1930-х годов, что дает нам возможность проанализировать иллюзии на нацистскую идеологию.

**THE OPPOSITION BROTHERHOOD / NAZY
(ON THE BASIS OF HERMANN HESSE’S STORY “JOURNEY TO THE EAST”)**

T. S. Simyan

In the present article an attempt is made to analyze the brotherhood model and its structure, as an axiological antipattern to the Nazi ideology, which is described in Hesse’s story called “Journey to the East”. The story is considered in the context of 1930-ies, which makes it possible to decode H. Hesse’s allusions to the Nazi ideology.

**ЯЗЫЧЕСКАЯ КОНЦЕПЦИЯ АНАТОЛЯ ФРАНСА
И РЕЛИГИОЗНЫЙ ФАНАТИЗМ**

Е. ЧИЧИАШВИЛИ

Большая часть франсовской полемики имеет корни в греко-латинской культуре, именно оттуда он черпает примеры, представляет их в качестве символа красоты лишь приемлемые для него ценности. « Любовь к пластической красоте, греческий языческий эстетизм, поэтическое сердце, бескорыстная любовь к ближнему – вот первые семена, попавшие на плодородную целину французской культуры. Это и было основой его великой языческой поэзии, его гуманизма » (1, 233). Франс благожелательно, но с определенной дистанции рассматривает другие цивилизации, полагая, что без этого невозможно благополучие современного общества; в тоже время сфера его борьбы ограничивается тем, что Валери окрестил « малым европейским районом » (3,617).

Франс никогда не ставил разум выше чувства и часто высмеивал ученых, всецело ушедших и утративших способность чувствовать, которые приводят человека к крайнему идеализму и фанатизму. Его антипатия к догматизму и фанатизму и благосклонное отношение к осмысленной, детерминистской жизненной позиции проявляются уже в ранних произведениях и в дальнейшем принимают более резко выраженный характер.

Рене Думик отмечает: «Нужна была вся нежность кисти Франса, вся тонкость его иронии, чтобы избежать той опасности, которую таит в себе исторический и сентиментальный жанр. Лишь поэтому, влюбленному в языческую концепцию жизни, было под силу создание гармоничных картин «Танс» (5,264).

В романе «Танс», опубликованном в 1890 году, действие происходит в тот период истории человечества, когда христианство уже набирало силы, но еще не было признано официальной религией. Франс описывает жизнь эллинистического города Александрии и на примере главного героя писатель показывает, что если человек наделен живыми чувствами и страстями, если его душа не скована страхом перед всевышним, и он не боится каждого действия и каждого своего шага, не прибывает в постоянном стра-